ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ներկանյութերի, ռետինափողրակների, վառելիքի լիզքավորիչների, քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2021թ. ներկայացված (14.06.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ՕԼԷԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումներն և պահանջը.</u>

«ՕԼԷԴ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.06.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մայիսի 12-ին www. armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակվել է ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր: Սույն գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 14.05.2021թ.-ին ստացվել է հարցադրում հետևյալ բովանդակությամբ.

«Հարգելի գործընկեր, խնդրում ենք տրամադրել պարզաբանում ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21- 7/31 ծածկագրով գնանշման հարցման 3-րդ չափաբաժնի հետ կապված. Ապրանքի անվանումը նշված է ՆԱՌԱ 27-1Ս. սակայն ՆԱՌԱ 27-1Ս մոդելի է լցակայան գոյություն չունի, ճշգրիտ անվանումը պետք է լինի ՆԱՌԱ 27Մ1Ս (27M1C), խնդրում ենք հրավերում կատարել համապատասխան փոփոխությունը կամ հավաստիացնել, որ գնահատող հանձնաժողովի համար ընդունելի տարբերակը ՆԱՌԱ 27Մ1Ս-ն է, ինչպես նաև ցանկանում ենք տեղեկանալ արդյոք անհրաժեշտ չէ նամակ-լիազոլագիր արտադրողի կողմից, քանի որ շուկայում առկա են բազմաթիվ օգտագործված էլ լցակայաններ ավելի մատչելի ձեռքբերման գնով, որոնք արտաքնապես ձևափոխված են այնպես, որ նոր լցակայանից բացարձակապես ոչնոչվ չեն տարբերվում սակայն որոշ ժամանակ օգտագրոծելուց հետո ի հայտ են գալիս բազմաթիվ տեխնիկական թերություններ և խնդիրներ.

17.05.2021թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) տրամադրում է հետևյալ պարզաբանումը (Հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն, հրապարակված է 2021-05-17 11:00:20-ից անժամկետ).

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ բարձրացված հարցի առնչությամբ պարզաբանում ենք, որ 3-րդ չափաբաժնի անվանումը փոխարինելու (էլ. լցակայան ՆԱՌԱ 27-1Ս-ը փոխարինել էլ. լցակայա- ՆԱՌԱ 27Մ1Ս-ով) վերաբերյալ, հայտնում եմ, որ մեր կողմից ներկայացված տեխնիկական տեղի է ունեցել վրիպակ (ապրանքի անվանման մեջ բաց է թողնվել Մ տառը):

Ելնելով վերը նշվածից՝ առաջարկում եմ «ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով մրցույթի 3-րդ չափաբաժնի անվանումը փոխարինել էլ. լցակայան ՆԱՐԱ 27Մ-1Ս-ով, իսկ 2-հարցադրման հետ կապված հայտնում եմ, մերժված կան բնութագրի ծանոթության 1-ին և 2-րդ կետերով պարտադիր պայման նշված է, որ ապրանքների ընդունումն իրականացնելու է միայն արտադրող գործարանի որակի անձնագրի կամ որակի սերտիֆիկատի առկայության և չօգտագործված լինելու դեպքերում»:

Փոփոխված հրավերը կհրապարակվի gnumner.am կայքում:

Այսպիսով, ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ ՆԱՌԱ 27-1Ս անվանումով գնման առարկա գոյություն չունի, որի արդյունքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ

մասի համաձայն 17.05.2021թ.-ին կատարվում է հրավերի փոփոխություն' վերահրապարակվում է:

Բացի վերը նշվածը, ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի շրջանակում գնման առարկայի պահանջը ներկայացված է եղել հստակ մոդել՝ ՆԱՌԱ 27Մ-1Ս, հետևաբար այն հակասել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին, իսկ շուկայի ուսումնասիրությամբ պարզվել է, որ առկա են նշված տեխնիկական բնութագրերին համապատասխան ավելի մատչելի, համարժեք մոդելներ, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 19.05.2021թ.-ին «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի կողմից ուղարկվել է հրավերի պարզաբանման հարցում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հարգելի գործընկեր, խնդրում ենք տրամադրել պարզաբանում ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով. Գնման առարկայի անվանումը դաշտում նշված է գնման առարկայի մոդելը՝ վառելիքի լիցքավորիչներ /էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե հղում է տրվում որևէ մոդելի, ապա կիրառելի է «կամ համարժեք» բառերը, այն էլ տեխնիկական բնութագրում, խնդրում ենք պարզաբանել. Գնահատող հանձնաժողովի համար ընդունելի է արդյոք, եթե առաջարկվող ապրանքը լինի ամբողջությամբ տեխնիկական բնութագրին համապատասխան, սակայն այլ անվանմամբ' համարժեք մոդել կամ հրավերում կատարել համապատասխան փոփոխություն տեխնիկական բնութագրում Ձեր կողմից նշված մոդելին՝ ՆԱՌԱ 27Մ1Ս ավելացնելով «կամ համարժեք» բառերը:

20.05.2021թ. Պատվիրատուն տրամադրում է հետևյալ պարզաբանումը (Հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն, հրապարակված է 2021-05-20 17:10:36-ից անժամկետից անժամկետ).

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ բարձրացված հարցի առնչությամբ պարզաբանում ենք, հաշվի առնելով, որ ՆԱՌԱ-27ՄՍ էլ. լցակայաններ արտադրվում են տարբեր ընկերությունների կողմից՝ համարժեքության պահանջ չի ներկայացվել:

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ համարժեքության պահանջ չի ներկայացվում:

Հայտերը բացվել են 25.05.2021թ.-ին և թիվ 5 արձանագրությամբ (կցվում է) արձանագրվել էր, որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի շրջանակում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնած փաստաթղթերում առկա է պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, եղել հրավերի մասնավորապես.

Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1, կցվում է) գնման առարկայի անվանումը սյունակում նշված է եղել էլ. յան, ՀՀ ՊՆ- ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում նշված է եղել վառելիքի լիցքավորիչներ /էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/, իսկ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է գնային առաջարկում (Հավելված 2, կցվում է) առկա անհամապատասխանությունը, այն է, հրավերով գնման առարկային անվանումը նշված է վառելիքի /էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/, սակայն մասնակցի կողմից գնման առարկայի անվանման դաշտում նշված է վառելիքի լիցքավորիչներ /էլ, լցակայան ՆԱՌԱ 27-1Ս/, ինչը հակասում է վերը նշված հրավերի պարզաբանման մասին հայտարարությանը: Գնահատող հանձնաժողովը 07.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությամբ (կցվում է) «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել է բավարար և ճանանչել ընտրված մասնակից, հիմք ընդունելով ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության կողմից 08.06.2021թ.-ին ներկայացված մասնագիտական եզրակացությունը, որում նշվում է, որ մասնակիցը առաջարկում է համարժեք մոդել՝ ՍԵՎԵՌ-11-50ՄՍ, ինչը ևս հակասում է հրավերի պահանջներին և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված պարզաբանման մասին հայտարարությանը:

Այսինքն, Պատվիրատուն «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան համարելով և այն չմերժելով միտումնավոր կամ սխալմամբ թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների սխալ մեկնաբանություններ և խախտումներ, որի արդյունքում մրցույթի արդյունքը՝ տվյալ մասնակցին ընտրված ճանաչելու մասով հարկ է ճանաչել անվավեր:

Այսպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունե ցող անձ լու ման քից, ման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման (այսուհետ՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի գ) պարբերությամբ ամրագրված է, որ մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված: Այսինքն, հետևում է, որ եթե գնման առարկայի անվանումը սխալ է նշված հայտը ենթակա է մերժման:

Նույն Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետում սահմանված է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից

ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինսկից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասը նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 8.2 կետի 2-րդ պարբերության համաձայն՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Հրավերի 8.10 կետի համաձայն' եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամասատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ պատվիրատուն նախ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները հրավերում չի նշել «կամ համարժեք» պայմանը, ինչը հնարավորություն չի տվել մրցույթի մասնակիցներին առավել նվազ գին առաջարկել, որից հետո, գնան ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է գնային առաջարկում առկա գնման առարկային անվանման անհամապատասխանությունը և «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնով գնահատել է բավարար և ճանանչել ընտրված մասնակից, հիմք ընդունելով,

որ մասնակիցը առաջարկում է համարժեք մոդել՝ ՍԵՎԵՌ-111-50ՄՍ, որն ակնհայտ ապօրինի է, հետևաբար գտնում ենք, որ մրցութի արդյունքը պետք է վերանայվի և հաղթող պետք է ճանաչվի 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը, քանի որ 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը առաջարկել է հրավերով պահանջված հստակ անվանմամբ ապրանք, որի համարժեք առաջարկը պարզաբանման մասին հայտարարությամբ ի սկզբանե բացառվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները՝ խնդրում ենք.

Ուսումնասիրել մեր կողմից ներկայացված բողոքը, քննության առնել, վերացնել ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի 10.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությամբ կայացրած որոշումը, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշումը և ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.06.2021թ. ժամը 09:20-ին, 06.07.2021թ. ժամը 09:30-ին և 12.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 17.06.2021թ. թիվ ՊՆ/02/3133-2021 գրությամբ ներկայացրել է որոշում կայացնելու համար անհրաժեշտ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով բոլոր փաստաթղթերը, միևնույն ժամանակ բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր 14.06.21թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/9564-2021 գրությամբ ներկայացված «ՕԼԷԴ» ՍՊԸ-ը բողոքը՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների բավարարման նպատակով ձեռքբերման ենթակա վառելիքի լիցքավորիչների համար գնման առարկայի անվանում նշվել է /ՆԱՌԱ 27 Մ1Ս/, որի մասով մասնակիցների կողմից ներկայացված հարցադրմանը արդյոք դա չի հանդիսանում առևտրային նշան՝ տրվել է պարզաբանում (կցվում են), որ ոչ դա ընդամենը գնման առարկայի անվանումն է և ինտերնետային կայքի ուսումնասիրությամբ պարզվել է,

որ տվյալ գնման առարկայից արտադրում են տարբեր կազմակերպություններ: Հաշվի առնելով, որ «ՄԱԺԵՎ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրին համապատասխան հայտ և առաջարկել է մասնակիցներից ամենացածր գնային առաջարկ, ուստի հանձնաժողովը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գնման առարկայի անվանումը հիմք է հանդիսանալու միայն տվյալ գնման առարկան հանձնման-ընդունման գործընթացում, ուստի վերջինիս ճանաչել է որպես ընտրված մասնակից:

Ինչ վերաբերում է գնային առաջարկում /ՆԱՌԱ 27 Մ1Ս/-ի փոխարեն /ՆԱՌԱ 27-1Ս/ անվանում նշելուն, ապա հայտնում եմ, որ արձանագրություններում դրա մասով նշում չի կատարվել քանի որ ի սկզբանե հանձնաժողովի կողմից չի նկատվել: Նշված թյուրիմացությունը ի հայտ է եկել հրավերում փոփոխություն կատարելու արդյունքում՝ հանձնաժողովի անդամներն հայտերը թյուրիմացաբար գնահատել են մինչև հրավերի փոփոխությունը նշված գնման առարկայի անվանման հետ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.06.2021թ. ժամը 09:20-ին, 06.07.2021թ. ժամը 09:30-ին և 12.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 16.06.2021թ. թիվ 003/1606 գրությամբ ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 բողոքի շրջանակներում ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ Ընկերությանը որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ, որը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքի վերաբերյալ ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը, փաստերը.

Պաշտպանության նախարարության կարիքների համար գնանշման հարցման եղանակով, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն մասնակցելով «ներկանյութերի, ռետինափողրակների, վառելիքի լիցքավորիչների, քիմիական

լաբորատորիայում կիրառվող սարքերի» ձեռք բերման «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնման ընթացակարգին՝ մասնակցության հայտ է ներկայացրել 2-րդ, 3-րդ չափաբաժիններին և ճանաչվել հաղթող մասնակից:

Ս.թ. հունիսի 11-ին «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն մրցույթի հրավերի 3-րդ չափաբաժնով ներկայացրել է բողոք:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն /Այսուհետև Ընկերություն/ ներգրավվել է, որպես երրորդ կողմ:

Բողոք բերելու հիմքերն ու հիմնավորումները.

«ՕԼԷԴ» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է, չհիմնավորված՝ բոլոր ասպեկտներով՝ իրավական և ընթացակարգային առումներով:

1. ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 41-րդ կետի դրույթները կիրառելի են, եթե առկա է անհամապատասխանություն: Գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է բավարար մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան:

Նախապատմությունը՝

«ՕԼԷԴ» ՍՊԸ-ն հայտ էր ներկայացրել գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնին՝ վառելիքի լիցքավորիչներ, առաջարկելով՝ 9 570 000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: 3-րդ չափաբաժնին հայտ էին ներկայացրել ևս չորս ընկերություն, այդ թվում նաև «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով 6 552 000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն 3 018 000 դրամով պակաս գին է առաջարկել քան «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն: Նախահաշվային գինը կզմել է 11 130 000 դրամ: Արդյունքում տնտեսում է 4 578 000 դրամ:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի առաջարկվող ապրանքի նկարագիրը չի հակասում և չի տարբերվում հրավերով պահանջվող ապրանքի բնութագրին, ինչպես նաև դրա նպատակային օգտագործման բուն էությանը և տրամաբանությանը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	անվանումը	տեխնիկական բնութագրերը

3	*Վառելիքի էլ. լցակայան*	Նախատեսված է ավտոտեխնիկան հեղուկ վառելիքով ավտոմատ լցավորման համար: - Նոմինալ ծախսը՝ 50լ/րոպե, - Բացթողնման մինիմալ ծավալը՝ 2լ, - Դոզավորման ընդհատությունը՝ 1 լ, - Ճշտության դասը՝ 0.25, - Հարաբերական թույլատրելի շեղման սահմանը, ± 0.5 %, - Թույլատրելի հիմնական շեղման սահման, ± 0.25 %, - Վառելիքի տարալցման մաքսիմալ ճնշուը՝ 0.3 ՄՊա, - Նոմինալ ֆիլտրման նրբությունը՝ 20 մկմ, - Խողովակաշարի ներծծման պայմանական անցումը՝ 40 մմ, - բացթողնման փողրակի երկարությունը՝ 4մ, - Գումարային հաշվիչի սահմանային ցուցումը – 999999 լիտր: Պոմպի շարժաբեր շարժիչը՝ - Շարժիչը՝ ասինխրոն, պայթյունաանվտանգ, պտույտի հաճախականությունը, 1500 պտ/րոպե, - Հզորությունը, 055 կՎտ, - Լարումը, 380 Վ Մակնշումը՝ լցակայանի կրող կոնստրուկցիայի վրա պետք է ամրացված լինի ցուցանակ հետևյալ տվյալներով - արտադրող ձեռնարկության ապրանքային նշանը - արտադրող ձեռնարկության համարակալման հերթական համարը - սնող ցանցի լարումը - արտադրության տարեթիվը - պայթյունապաշտպանական մակնշումը Հաշվիչ մեխանիզմի վրա նշվում է վառելիքի չափման միավորը, հիմնական թույլատրելի շեղումը: Գործարանային փաթեթավորմամբ:

Հատկանշական է, որ տառացիորեն նույն բնութագիրն են առաջարկել 3-րդ չափաբաժնին հայտ ներկայացրած մյուս մասնակիցները, այդ թվում նաև «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն:

Այսպես՝ Որոշման 21-րդ կետի 1-ին մասը սահմանում է, որ պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համտասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Գնանշման հարցման մրցույթի հրավերի օրինակելի ձևը այդ թվում հավելվածների օրինակելի ձևերը, հաստատվել են ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով և հրապարակվել են գնումների պաշտոնական տեղեկագրում: Որոշման 32-րդ կետով սահմանվում է, որ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ Հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Որոշմամբ նշվում է՝ եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը գնման հայտով, մասնավորապես հավելված 1.1-ով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի (գնման առարկայի) անվանումը՝ «Վառելիքի էլ. Լցակայան» և դրա տեխնիկական բնութագիրը:

Գնումների օրենսդրությունը հնարավորություն է ընձեռնում հնարա-որության դեպքում նշել ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը: Սակայն մրցույթի հրավերով այն նախատեսված չի եղել:

Ինչ վերաբերվում է «ՕԼԷԴ» ընկերության կողմից ներկայացված բողոքին, որ մրցույթի հրավերով նախատեսվել է կոնկրետ ապրանքանիշ ՆԱՌԱ 27-Մ1Ս պատվիրատուի պահանջը եղել է այն, պետք է պարտադիր լինի այդ ապրանքանիշ առնվազն անհեթեթություն է, քանի որ մրցույթի հրավերով չի սահմանվել, պահանջ չի եղել, որ գնման հայտով մասնակիցը պարտավոր է ներկայացնելու ապրանքային նշանը, մակնիշը, արտադրող կազմակերպության վերաբերյալ տեղեկատվություն: Դեռ ավելին «ՕԼԷԴ» ընկերության պարզաբանումը դուրս է եղել հրավերի և գնումների պահանջներից: «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի սուբյեկտիվ, ոչ ստանդարտ մոտեցմամբ կարող է խախտվել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպման սկզբունքները: Մասնավորապես «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն մի կողմից փորձելու ազդել Գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների վրա, մյուս կողմից է ստիպել գնահատումն իրականացնել այլ կերպ, ի օգուտ իրեն՝ ցուցաբերելով կանխակալ և հայեցողական դիրքորոշում, ընդհուպ փորձելով յուրացնել Գնահատող հանձնաժողովի գործառույթները: Գնահատող հանձնաժողովն անբողջությամբ առաջնորդվել է Օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով, այն է՝ հայտերը գնահատվում են Հրավերով սահմանված

կարգով: Մասնավորապես մրցույթի հրավերի 8.2 կետով սահմանված է, որ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Տվյալ պարագայում գնահատումն իրականացվել է մրցույթի հրավերի և այլ իրավական ակտերի պահանջներին խիստ համապատասխան:

Մեր կարծիքով պատվիրատուն, ըստ էության հստակ սահմանել է գնման առարկայի անվանումը՝ «վառելիքի լիցքավորիչներ» ինչպես նաև տեխնիկական պայմանները, միաժամանակ գնման առարկայի անվանմանն ի հավելում փակագծերում, որպես հուշող կամ օժանդակող տեղեկատվություն, նշելով «ՆԱՌԱ 27-Մ1Ս»:

Տարակուսելի է նաև «ՕԼԷԴ» ընկերության շահագրգռվածությունը մրցույթի հրավերով նախատեսված գնման առարկան 3 018 000 դրամով ավելի թանկ վաճառելու հարցում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովի որոշումը բովանդակային առումով վարչական ակտին բնորոշ ակտ է, քանի որ համապատասխան մասնակցի և պատվիրատուի միջև պայմանագիր կնքելու հարցն ուղղակիորեն պայմանավորվում է այդ որոշմամբ: Հետևաբար համանման հարաբերություններ կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը («Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը») օրենքի անալոգիայով կիրառելի է նաև գնահատող հանձնաժողովի գործունեության նկատմամբ: Ավելին, անգամ անկախ մեջբերված դրույթից և իրավահարաբերության տեսակից (վարչական կամ քաղաքացիաիրավական), տվյալ կոնկրետ իրավահարաբերության յուրաքանչյուր մասնակից իր գործողություններում կաշկանդված է օրենքով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակով և իր իրավազորության տիրույթից դուրս որևէ գործողություն պետք է որակվի որպես հակաիրավական արարք: Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են

կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Հակառակ դեպքում ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ենթարկվելով ճնշումների, անուղակի սպառնալիքների, կարող է շրջանցել օրենքները, ընդունել կամայական որոշումներ: Արդյունքում կարժեզրկվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հոչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի իրավակիրառ պրակտիկա: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը գնահատումն իրականացրել է վերաբերելի օրենքների և այլ իրավական ակտերի շրջանակներում, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների վրա: Բացի այդ, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանումն ու կիրառումը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Սահմանադրության 59-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են: Ինչին և ուղղված է եղել Գնահատող հանձնաժողովի գործողությունները մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպում: Ամփոփելով վերոգրյալը, ակներև է, որ Գնահատող հանձնաժողովը գենան գործընթացում ապահովել է

պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման հնարավորությունը: Ցուցաբերել է միատեսակ իրավունքի կիրառում, բացառելով խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումներ՝ ապահովելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները: Բացի այդ, Գնահատող հանձնաժողովը ապահովել է նաև օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթի կազմակերպման սկզբունքները: Մրցակցության արդյունքում նախարարությունը կտնտեսի 4 578 000 դրամի ընդհանուր խնայողություն: Վերոգրյալ փաստարկներից ելնելով, անվիճելի է դառնում այն հանգամանքը, որ «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի գործողություններն ու ներկայացրած բողոքը անհիմն են և առարկայազուրկ»:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.07.2021թ. ժամը 09:30-ին և 12.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ներկանյութերի, ռետինափողրակների, վառելիքի լիզքավորիչների, քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՕԼԷԴ» և «ՄԱԺԷՎ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. ««ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի անվանումը սյունակում նշված է «Վառելիք էլ. լցակայան», այնինչ՝ Ընթացակարգի հրավերում նշված է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս», և որոշում է կայացվել Կարգի 41-րդ կետի համաձայն՝ 01.06.2021թ. կասեցնել նիստը և ծանուցել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին շտկման վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2021թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը.....:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ներկանյութերի, ռետինափողրակների, վառելիքի լիզքավորիչների, քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՕԼԷԴ» և «ՄԱԺԷՎ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. ««ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի անվանումը սյունակում նշված է «Վառելիք էլ. լցակայան», այնինչ՝ Ընթացակարգի հրավերում նշված է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս», և որոշում է կայացվել Կարգի 41-րդ կետի համաձայն՝ 01.06.2021թ. կասեցնել նիստը և ծանուցել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին շտկման վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով ըստ էության վիճարկում է Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումները՝ այն հիմնավորմամբ, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը,

մասնավորապես՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում և Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, գնման առարկայի անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկային:

Այսպես, համաձայն Պատվիրատուի կողմից 17.05.2021թ. տեղեկագրում հրապարակված հրավերի պարզաբանման մասին հայտարարության՝ Պատվիրատուն մասնավորապես նշել է, որ 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել վրիպակ, այն է՝ հրավերով սահմանված «Էլ. լցակայան ՆԱՌԱ 27-1Ս-ը» ապրանքի անվանման մեջ բաց է թողնվել «Մ» տառը, որից հետո Պատվիրատուն 17.05.2021թ. տեղեկագրում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջների համաձայն հրապարակել է Ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարություն հետևյալ բովանդակությամբ՝ 3-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի փոփոխություն, փոփոխության առաջացման պատճառ՝ տեխնիկական վրիպակ:

Փոփոխված ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով սահմանվել է գնման առարկայի հետևյալ անվանումը՝ «Վառելիքի լիցքավորիչներ /Էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/»:

Այնուհետև՝ 20.05.2021թ. տեղեկագրում հրապարակված հրավերի պարզաբանման մասին հայտարարության համաձայն՝ ի պատասխան այն հարցադրմանը եթե գնման առարկայի անվանումը դաշտում նշված է գնման առարկայի մոդելը՝ վառելիքի լիցքավորիչներ /Էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե հղում է տրվում որևէ մոդելի, ապա կիրառելի է «կամ համարժեք» բառերը, ***Պատվիրատուն պարզաբանել է, որ հաշվի առնելով, որ ՆԱՌԱ-27Մ1Ս էլ. լցակայաններ արտադրվում են տարբեր ընկերությունների կողմից՝ համարժեքության պահանջ չի ներկայացվել:***

Այս տեսանկյունից ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ ուղղված «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանելու տեսանկյունից գնահատելուն և արդյունքում արձանագրված անհամապատասխանության

մասով շտկման պահանջ ներկայացնելուն և ընտրված մասնակից ճանաչելուն, հարկ եմ համարում ընդգծել հետևյալը.

Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար***: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>***, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, գնահատելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունն Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, արձանագրելով հետևյալ անհամապատասխանությունը.*** ««ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի անվանումը սյունակում նշված է ***<u>«Վառելիք էլ. լցակայան», այնինչ՝ Ընթացակարգի հրավերում նշված է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս»</u>***, վերջինիս ծանուցել է շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, այնուհետև՝ 08.06.2021թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ գնահատելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ը, որոշել է վերջինիս հայտը գնահատել բավարար և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից, այն պայմաններում, երբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես գնման առարկայի անվանում նշել է «Վառելիքի լիցքավորիչներ/ էլ. լցակայն ՍԵՎԵՐ 111-50 ՄՍ», մինչդեռ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով սահմանվել է գնման առարկայի հետևյալ անվանումը՝ «Վառելիքի լիցքավորիչներ /Էլ. լցակայան ՆԱՌԱ 27Մ1Ս/»:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի իրարամերժ և հակասական գործողությունների արդյունքում, այն է՝ Ընթացակարգի հրավերում գնման առարկայի անվանման մեջ առկա տեխնիկական վրիպակի հիմքով կատարելով փոփոխություն, այնուհետև բացառելով համարժեք ապրանքի ներկայացումը, կայացնելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում՝ թույլ է տվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Կարգի 42-րդ կետով

սահմանված պահանջների խախտում, ուստի գտնում եմ, որ պետք է դադարեցնել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով հիմնավոր է:

Անդրադառնալով բողոքաբերի այն դիտարկմանը, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, գնման առարկայի անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկային, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման, արձանագրում եմ, որ ***«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ի՝ գնային առաջարկի 3-րդ չափաբաժնով որպես ապրանքի անվանում նշվել է «Վառելիքի լիցքավորիչներ/էլ. լցակայան ՆԱՌԱ 27-1Ս»,*** տվյալ դեպքում գտնում եմ, որ ապրանքի անվանման մեջ «Մ» տառի նշված չլինելը չի կարող հանգեցնել հայտի մերժման:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին՝ «Վերացնել ԳՀԱՊՁԲ-21-7/31 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի 10.06.2021թ.-ի թիվ 6 արձանագրությամբ կայացրած որոշումը», արձանագրում եմ, որ նշված արձանագրությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտի մասով որևէ որոշում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կայացվել, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում նշված արձանագրությունը դադարեցնելն անհիմն է:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին՝ ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի արդյունքներով պայմանավորված, Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն, գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին), ուստի գտնում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ևս ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՕԼԷԴ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**